ՆԱԽԱՀԱՇԻՎ. — I Հիմնական դրամագլուխ. —

1. 1500 դազգեահ 625–ական բուբլով	937,500 ր.
2. 20,000 ճախարակ 20–ական ր.	400,000 ր.
3. 60 տոլաք 120–ական ր.	7,200 ր.
4. 1,200 միլ 120–ական ր.	24,000 ր.
5. 500 խոզանակ 8–ական ր.	4,000 ր.
6. Անակնկալ ծախքեր	127,300 ր.
Ընդամենը	1,500,000 ր.

II. Աշխատավարձ (10 շաբաթայ համար)

1. 1500 ջուլհակ 60–ական ր. շաբաթական	900,000 ր.
2. 20,000 մանող 15–ական ր. շաբաթ.	3,000,000 ր.
3. 800 դդրաբ	384,000 ր.
4. 15000 մասքաշինող	720,000 ր.
5. 150 թելակապող	72,000 ր.
6. 30 հիւսն	14,400 ր.
7. 30 ասպ շինող	14,400 ր.
8. 30 չափող և 60 մաքրող	43,200 ր.
9. 30 վարպետ և 30 օգնական	28,800 ր.
10. 30 շուտ անող	14,400 ր.
48–ական ր. շաբաթ.	
Ընդամենը	5,191,200 ր.
Գումար	6,691,200 ր.

(Հաստ. հոկտ. 8–ին 1918 թ.)

Գաղթական որբերի խնամատարութեան և դաստիարակութեան մասին. — Յօդ. 1. *Հայաստանի սահմաններում բոլոր գաղթական որբերի խնամատարութեան ու դաստիարակչութեան գործը պետութիւնը վերցնում է իր վրա, որի անմիջական վարումն յանձնւում է հանրային խնամատարութեան մինիստրին:*

Ծանօթ. — *Իւրաքանչիւր ինքնավարութեան մարմին, հասարակական կազմակերպութիւն ինչպէս և մասնաւոր անհատ իրաւունք ունեն բանալու ու պահելու որբանոց, բայց պետութեան հսկողութեան ներքոյ:*

Յօդ. 2. *Որբերին խնամելու և դաստիարակելու համար հիմնւում են անհրաժեշտ թւով որբանոցներ:*

Յօդ. 3. *Որբանոց ընդունւում են մինչև տասնեհինգ տարեկան երեխաներ, որոնք զուրկ են ծնողներից կամ խնամակալներից:*

Յօդ. 4. *Որբանոցներում կարելի է միասին պահել երկու սեռի երեխաներ ոչ բարձր տասնեմէկ տարեկանից:*

Յօդ. 5. *Տասնեհինգ տարին լրացած որբերի համար իւրաքանչիւր որբանոցի վարչութիւն հայթայթում է համապատասխան աշխատանք:*

Յօդ. 6. *Հանրային Խնամատարութեան Մինիստրութեան մէջ հիմնւում է յատուկ որբանոցային բաժին իր վարիչով:*

Յօդ. 7. *Այդ վարիչին կից նրա նախագահութեամբ կազմւում է խորհրդակցութիւն հանրային կրթութեան մինիստրի և հասարակական որբանոցների վարչութեան ներկայացուցիչներից խորհրդակցական ձայնով:*

(Հաստ. հոկտ. 11–ին 1918 թ.)